ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Վայք - 3801, Շահումյան 18
Հեռ/tel +37498992894
Էլ. Փոստ vayktown@mail.ru

29 ԱՊՐԻԼԻ 2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 101-Ա

«ՍԱԱՄ- ԱՈՒԴԻՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վայքի համայնքապետարանի կողմից 22.03.2024 թվականին հայտարարված «ՎՀ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով ներքին աուդիտի ծառայությունների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ՝ մասնավորապես հրավերի տեխնիկական բնութագրով ծառայությունների մատուցման համար պահանջվող հինգ աուդիտորներից երկուսը չեն ապահովել «Տեխնիկական առաջադրանք» մասի 5-րդ բաժնի բ) կետով սահմանված ներքին աուդիտորի համար մասնագիտական գործունեության առնվազն 3 (երեք) տարվա փորձի պահանջը.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 08.04.2024 թվականին ծանուցվել էր մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի արձանագրած անհամապատասխանությունները չի շտկվել:

Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի հ.526-Ն որոշմամբ սահմանված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 42-րդ կետով՝ մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել: Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի: Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 19.04.2024 թվականին հրապարակվել է տեղեկագրում: Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» փակ բաժնետիրական ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գնումների հանձնակարգողի վրա:
3. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Վայքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**